այդ յօդուածի մէջ սխալմամբ տպված էր «նախընթաց դարում», իսկ պէտք է լինէր «նախընթաց տարում»:

—

Ս. Էջմիածնի Սինօդը հրատարակել է «Кавказъ» և «Մեղու Հայաստանի» լրագիրներում մի պաշտօնական հերքում վեհափառ կաթողիկոսի հիւանդութեան մասին: Այդ հերքման լուրը հրատարակելով ռուս «Кавказскій Курьеръ» լրագիրը աւելացնում է թէ շատ ուրախ է որ վեհափառը առողջ է, բայց զարմանում է կաթողիկոսի առողջական դրութեան վրա հակասական լուրերի մասին: Մի կողմից պաշտօնական տեղեկութիւն է հրատարակում Սինօդը որ վեհափառը առողջ է, իսկ միւս կողմից այն ամեն անձինքներից, որոնք վերջին ժամանակներ գնում են Էջմիածին, ոչ ոքին չեն թողլ տալիս ներկայանալ կաթողիկոսին, պատճառ բերելով թէ նա տկար է:

—

Երևանի «Պսակ» լրագիրը հաղորդում է որ Լուսաւորչի տօնի օրը եկեղեցական հանդիսի ժամանակ վեհափառ կաթողիկոսը հազիւ կարող էր կանգնել և ոտները շարժել. նրան պահում էին երկու կողմից եպիսկոպոսներ: Վեհափառը «Պսակի» խօսքին նայելով, ամբողջ ժամանակ ինքն իր հետ էր խօսում կամ իր շրջապատողներին էր դիմում ասելով որ իրաւունք ունի սպիտակ վեղար կրելու և հրապարակապէս աշխատում էր իր ուսերի վրայից դէն գցել իր փիլոնը:

—

Բժիշկ Յովհաննիսեան գրում է «Մեղու Հայաստանի» լրագրին Ալէքսանդրապօլից որ «Մշակի» հաղորդած լուրը, իբր թէ վեհափառ կաթողիկոսը Ալէքսանդրապօլի պատգամաւորութենից միայն իրան է ընդունել,—սուտ է: Վեհափառը, ինչպէս վկայում է բժիշկը, պատգամաւորներից ոչ մինին չընդունեց իր տկարութեան պատճառով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԱ

Լրագիրները զանազան դատողութիւններ են անում Միացեալ Նահանգների վիրաւորված նախագահի վախճանի առիթով: Նախագահի մեռնելը շատ հաւանական է և դեռ ևս անկարելի է սպասել, որ նա կառողջանայ:

Միացեալ Նահանգների օրէնքների համեմատ հանրապետութեան նախագահի մեռնելուց յետոյ նրա տեղ մէկ ուրիշը չեն ընտրում: Իւրաքանչիւր չորս տարին մի անգամ Միացեալ Նահանգների մէջ հանրապետութեան նախագահի հետ միասին ընտրվում է և փոխ-նախագահը, որ սովորական ժամանակներում ոչինչ պաշտօնական պարապմունքներ և գործեր չունի: Նա մի և նոյն դեր է խաղում հանրապետութեան մէջ, ինչ որ թագաժառանգը միապետական երկիրների մէջ: Փոխ-նախագահը իշխանութիւն է ստանում միայն այն ժամանակ, երբ վախճանվում է նախագահը և պահում է այդ իշխանութիւնը այնքան ժամանակ, որքան վախճանվածին մնում էր մինչև նախագահական ժամանակամիջոցի լրանալը: Երբ Լինկօլն մարդասպանի զոհ դարձաւ, ամերիկացիները անտրտունջ համբերում էին փոխ-նախագահ Անդրիւ Ջօնսօնի անընդունակ և մի և նոյն ժամանակ շահասէր կառավարութիւնը:

Երբ Անդրիւ Ջօնսօնի և նրա վարչութեան գեղծումները շատ բացարձակ և խայտառակ ուղղութիւն ստացան, ամբողջ երկիրը միաձայն պահանջեց, որ հանրապետութեան նախագահը դատաստանի ենթարկվի: Ժողովրդական ներկայացուցիչները ուշադրութիւն դարձրին հասարակութեան այդ պահանջի վրա և իրանք քննութեան ենթարկեցին Ջօնսօնին: Կօնգրեսը քննութիւն կատարելուց յետոյ յայտնեց, որ թէ և Ջօնսօնի գեղծումները ակներև են, բայց նրանք դեռ առիթ չեն տալիս նախագահին դատաստանի ենթարկելու համար: Այդպիսի ինքնուրոյն և տարօրէն ձևով արդարացած Լինկօլնի յաջորդը յաւիտեան հեռացաւ քաղաքական ասպարիզից, երբ լրացաւ նախագահական ժամանակամիջոցը:

Այդ դէպքը առիթ տուեց ամերիկացիներին հարց բարձրացնել, թէ արդեօք հարկաւոր չէ փոխ-նախագահի ընտրութեան վրա նոյնպիսի ուշադրութիւն դարձնել, ինչոր նախագահի ընտրութեան վրա է դարձնվում և աշխատել, որ ոչինչ և քաղաքական կասկածաւոր բարոյականութեան տէր մարդիկ չընտրվեն հանրապետութեան փոխ-նախագահ: Բայց շուտով մոռացվեցաւ պատահածը և փոխ-նախագահի ընտրութեան վրա դարձեալ ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում:

Միացեալ Նահանգների այժմեան փոխ-նախագահ Արչըրի անձնականութեան մասին գրեթէ ոչինչ յայտնի չէ: Նա կարող է ընդունակ և գործունեայ մարդ լինել, բայց այդ յատկութիւնները նա դեռ պէտք է ցոյց տայ, եթէ Հարֆիլդի մահուան շնորհիւ նա անցնի կառավարութեան գլուխը: Այդ գործը իսկապէս չէ շփոթեցնում ամերիկացիներին, որովհետև նրանք մինչ այն աստիճան հաւատում են իրանց պետական մեքենայի լաւ յատկութիւններին, որ նախագահի փոփոխութիւնը երկրին ոչինչ վնաս չէ կարող հասցնել:

Անհանգիստ կարող է լինել միայն ինքը Արչըր, որովհետև Հարֆիլդի ժառանգ լինելը շատ հեշտ չէ: Այժմեան վիրաւորված նախագահը չափազանց գործունեայ մարդ էր: Նա սկսեց մաքրել վարչութիւնը, արտաքսելով ծառայութենից կաշառակեր անձանց, որոնք նրա նախորդների ժամանակ պաշտօններ էին ստացել: Նրա ժողովրդականութիւնը և նրա հակառակորդների զայրոյթը հաւասարապէս մեծանում էին: Շատ կարելի է, որ նրա ստացած վէրքն էլ նրա հակառակորդների գործն է: Արչըր ստիպված կը լինի շարունակել Հարֆիլդի սկսած գործը, որովհետև հակառակ դէպքում նա հակակրելի կը դառնայ և կենթարկվի հասարակական կարծիքի անբաւականութեանը: Իսկ շարունակելով Հարֆիլդի քաղաքականութիւն, նա կը թշնամացնէ իրան Հարֆիլդի կաշառակեր հակառակորդներին և թշնամիներին: Այդ դրութեան մէջ մարդ պէտք է չափազանց եռանդոտ լինի և երկաթէ բնաւորութիւն ունենայ:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Կ. Պօլիս, 25 յունիսի

Այսօր Ներսէս պատրիարքը տուաւ ազգային ժողովին իր վերջին և անդարձ հրաժարականը. Ինչ հանելուկ է այս հայրենասէր մարդու արածը այսպիսի մի ժամանակ, երբ հայոց հարցն է դեսպանների սեղանի վրա, երբ ազգի սէրը նորա հետ է և յոյսը նորա տաղանդի վրա, երբ ամբողջ Եւրոպան ճանաչում է Ներսէսին, ինչպէս արժանաւոր գլուխ մի ազգի, որին կարելի է յառաջադիմական համարել, հետևաբար և արժանի մարդավայել վիճակի և արժանաւոր դրութեան, ինչպէս այդ վկայեց հանդիսաւոր կերպով լօրդ Դիւֆերին իր տեսակցութեան ժամանակ Ներսէսի հետ, որ տևեց ամբողջ ժամ: Ի՞նչ է պատճառը պատրիարքի այս տարօրինակ, բայց անդրդուելի որոշման. Նորա հիւանդոտ դրութիւնը, նորա չքաւոր վիճակը, նորա անխոնջ աշխատութիւնները, նորա որ և իցէ երկիւղը—ոչ մինը այս պատճառներից. Ներսէսը մարդ է, նորա համբերութեան և դիմացկունութեան սահմանն էլ անցել է, նա չէ կարող տանել ազգային ժողովի անվերջ և անսպառելի մանր, ստոր, կուսակցական ինտրիգաները. խաւար, կեղտոտ ու դաւաճանական արարքները. կեղծ, լիրբ և խաբեբայ վարմունքը. անվերջ և անտանելի պառաւախօսութիւնները. բիրտ, անսիրտ և հակաազգային ուղղութիւնը—այս ամենը խեղճ մարդու հոգին էլ կոկորդը հասցրեց. էլ նա որոշեց չքաւորութեան և անյայտութեան մէջ մնալ, քան թէ գործ ունենալ և ամեն օր տեսնել այսպիսի ապերախտ, ապականված անհատների հետ:

Դժուար կարող էք հասկանալ այսպիսի մի վիճակ, այսպիսի մի բարոյական դրութիւն մինչև որ ձեր աչքով չը տեսնէք թէ ինչ անել է Կ. Պօլսի հայոց ազգային ժողով և ինչպէս մարդիկ են նստած այս ժողովի մէջ. մի կողմից դրուչական էֆէնդիներ և կաթոլիկութենից նոր դարձած կեղծ, խաբեբայ, մատնիչ արարածներ, որոնք իրանց այլապէս չեն ծանօթացնում ձեզ, եթէ ոչ «ազգասէր» Ա.. «ազգասէր» Բ. անուններով. միւս կողմից սարկաւագի, երկդիմի, խարդախ և վերջին աստիճան շահամոլ տիրացուներ. Դէհ, համեցէք մի կողմից դիմանալ առաջինների անդադար յարձակմանց, որոնք պախարակում են Ներսէսին նորա բռնած կուրսի ընթացքի մասին Թիւրքիայի տէրութեան դէմ, համարելով այդպիսի ընթացքը «ազգավնաս», որովհետև Թիւրքեան էլ պաշտօններ չէ տալիս իրանց. միւս կողմից բաւարարութիւն տուէք եթէ կարող էք տիրացու երեսփոխանների անկուշտ, ագահ, լիրբ և ստոր պահանջներին: Մէկը ստացանից տեղ է պահանջում իր այս ինչ ազգականի համար, սպառնալով անյաջողութեան դէպքում, ամեն տեսակ դաւադրութիւն և խռնդումներ յարուցանել ժողովի ընթացիկ գործերի մէջ. միւսը ուզում է լինել անդամ, նախագահ, ատենապետ և ատենադպիր այս ինչ «խորհրդի», «դիւանի», «ժողովի», «մասնաժողովի», «յանձնաժողովի» և այլն և այլն:

Ի՞նչ անէ այս պարագաներում Ներսէսը, վռնդէ էֆէնդիներին և կորէ բոլոր յարաբերութիւնները. այն ժամանակ ինչպէս անօրինէ զանազան պէտքեր, մանաւանդ դրամական, որ չորս կողմից պահանջ են յայտնում պատրիարքին, մինչդեռ պատրիարքը այնչափ ձեռնունայն է, որ ոչ միայն մի աւելորդ կոպէկ չունէ ուրիշներին օգնելու համար, այլ հազիւ կարողանում է իր ամենակա-

Դրանք մի խառնուրդ են թիւրքական մադրասայի և եւրոպական ուսումնարանի: Միացեալ ընկերութեան ուսումնարանները դրանցից անհամեմատ բարձր են, բայց Ռուսաստանի հայոց ուսումնարանի դէմ ստոր են: Դա պարզ է, որ և ռուսները իրանց ուսումնարանները օրինակել են Գերմանիայից և Ռուսաստանի հայերը՝ ռուսներից. Տաճկաստանի հայերը ումից պիտի օրինակէին:

Կան մի տեսակ մարդիկներ, որոնք միշտ պակասութիւններ աշխատում են ծածկել և գործերի մակերևոյթը անբիծ և պայծառ ցոյց տալ: Նրանք կարծում են, որ ընդհանուր գործերին վերաբերեալ պակասութիւններ յայտնելը, կարող է ժողովրդին լքում պատճառել և վնասներ յառաջ բերել: Այսպիսով պակասութիւնները միշտ կը մնան անուղղապակասութիւններ և աճելով օգտի փոխարէն, վնասներ կարտադրեն:

Յայտնի է, որ ամեն մի գործի սկզբնաւորութիւնը, բնականաբար, ամենակատարեալ և անսխալական չէ կարող լինել: Սկզբնաւորութիւնները գործնական փորձերին ենթարկվելով, ցոյց են տալիս իրանց անկատար կողմերը: Այդ կողմերը յայտնել ոչ թէ վնասակար, այլ երաշխաւորող են գործի կատարելութեան հասնելուն, և փոխանակ ժողովրդի մէջ լքում պատճառելու, նրա համարումն են գրաւում:

Միացեալ ընկերութեան թերութիւնների վրա խօսելը չէ նշանակում յորդորել ժողովրդին, որ նա յետ կանգնի իր նուիրատւութենից: Ցարդ ժողովուրդը իր նուէրները թերահաւատութեամբ է անում, տեղեկութիւններ չունենալով թէ իր ցանկութիւնները ինչ եղանակաւ են գործադրվում *) Բայց երբ կը յայտնվի թէ խնդիրը մի քանի թեթև պակասութիւնների վրա է, որոնք անդարմանելի չեն և շատ հեշտութեամբ կուղղվեն, այն ժամանակ ժողովուրդը վստահութեամբ, գիտակցաբար կը նուիրէ և կարող է բոլորովին ապահովացնել ընկերութեան գոյութիւնը:

Ազգային լրագիրները Միացեալ ընկերութեան հետ խիստ քնքշութեամբ են վարվել, «Մշակը» միայն էր, որ նրանց միացրեց և պ. Հ. Առաքելեանի յօդուածով ուսումնական ծրագրի թերութիւնները շօշափեց: Յիշեալ նշանաւոր միութիւնից զկնի խիստ կարևոր է և մի բարոյական երկրորդ միութիւն Ռուսաստանի հայ գիտնական դասակարգի հետ. առանց այդ համերաշխ գործունէութեան Միացեալ ընկերութեան համար շատ դժուար կը լինի դպրոցների ուսումնապէս կառավարելը: Միացեալ ընկերութեանը պակասում են վարժապետներ բոլորանկատ նշանակութեամբ և արդարև Վանայ վարժապետանոցի տեսուչը, ուսուցիչները չեն համաձայնում վարժապետանոցի անուանը: Հայաստան, այդ անմշակ աշխարհը, մանաւանդ, գործունեայ անձինքների պէտք ունի, բայց եթէ Կ. Պօլսում այդպիսի մարդիկ չը կան, միթէ ուրիշ տեղ չէ կարելի պտռել, *)

Վանայ բոլոր ուսումնարանների մէջ լաւ ապագայ խոստանողը Վարագայ վանքի նորաբաց երկրագործական ուսումնարանն է, որը երեք գերմանական ուղղութեամբ զարգացած ուսուցիչներ ունի: Պ. Նշան Մատաթեան աշխատասէր երիտասարդը, որ գործնական երկրագործութիւնը աւարտել է Գերմանիայում, յոյս է տալիս մեծ արդիւնքների: Վարագայ վանքին արած վերջին այցելութեանս ժամանակ, ես տեսայ պ. Մատաթեանին, որ իր աշակերտների հետ սայլի ճանապարհ էր շինում և արուեստական անտառ գցելու պատրաստութիւններ էր տեսնում: Այդ ուսումնարանի ամենագովելի կողմն այն է, որ նա բաց է բոլոր դաւանութեանց և կրօնների համար. իր կանոնադրութեամբ նա պարտաւորված է չորս այլադաւան աշակերտներ ձրիապէս ընդունել, որոց թւում մի քուրդ պատանի արդէն ընդունված էր: Այդ միակ միջոցն է վայրենի ցեղերը քաղաքակրթելու և ինչու Միացեալ ընկերութեան ուսումնարանների դռները միայն հայերի համար են բաց:

Վարագայ երկրագործական ուսումնարանը Խրիմեան հայրիկի վերջին ձեռնարկութիւնն է, պէտք է նկատել, որ այդ նշանաւոր հայրենասիրի ամենաթանկագին օրերը դէպի ծերութիւնն է խոնարհում, և շատ երկար ժամանակ բաղդ չենք ունենայ նրա կենդանութիւնը վայելելու. հարկաւոր է օգուտ քաղել, քանի որ ժամանակը մեր ձեռքն է, օգնել նրա գիւղատնտեսական հիմնարկութեանը: Կ. Պօլսի սովելոց կեդրոնական յանձնաժողովը, արդէն Խրիմեան հայրիկին օժանդակութեան ձեռք տուեց, ապահովելով երկրագործական ուսուցչի տարեկան ռոճիկը:

Սովելոց մասնաժողովին վերաբերեալ ես շատ գովեստից արժանի և մխիթարական լուրեր ունեմ: Այդ յիշատակաց արժանի յանձնախումբը ազգից իրան յանձնած պաշտօնը խղճմտանքով կատարեց. պահապան հրեշտակի պէս, նա պաշտպանեց զոհը պատուհասի դէմ և համազգային գթութեան շնորհը նա անխտիր բաժանեց բոլոր թշուառներին: Այդ մարդասիրութեան արդիւնքն է, որ Վանայ մասնաժողովի նախագահը, Խրիմեան հայրիկ, ոչ միայն հայերի, այլ բոլոր քիւրդերի, ասօրիների, եզդիների և տաճիկների հայրիկն է միաժամայն, որի մեծ անունը վայրենի ցեղերի մէջ պատկառանք և համակրութիւն է ազդում և հայ ազգը նրանց աչքում ահագին հեղինակութիւն է ստացել:

Սովելոց յանձնաժողովը չը բաւականացաւ միայն սովածները կերակրելով. նա ձեռնարկեց աւելի վնասված գաւառների գիւղատնտեսութիւնը բարւոքել և արդէն այս տարի գարնան ուղարկվել էին Վան խաշխաշ (օպիւմ) և բամբակ ցանող վարպետներ: Մեծ պ. Կամսարականի առաջարկութեամբ ռուսերէնից թարգմանվեց փոխատու ընկերութեան կանոնները (ссудныя товарищества): Այդ ընկերութեան միջոցով կարելի է գիւղացուն ազատել վաշխառուների անխիղճ տոկոսից. միջոց տալ նրան պարտքերից ազատվելու և դրամագլխի տէր դառնալու:

Կ. Պօլսոյ սովելոց կեդրոնական յանձնաժողովը ազգի իրան տուած միջոցներով յաղթեց սովին. ազգը նրան պարտական է երախտապարտ շնորհակալութիւն այդ մեծ յաղթութեան համար:

Կ. Պօլսոյ կեդրոնական յանձնաժողովը պիտի շարունակէ իր գոյութիւնը ոչ ինչպէս սովելոց յանձնաժողով, այլ իբրև գիւղատնտեսական ընկերութիւն, որ միշտ պիտի հոգ տանի գիւղացու ապահովութեան համար աւելի արդիւ-

---

*) Ցաւալին այն է, որ ընկերութեան ընդհանուր գործունէութեան վրա ոչ ոք ստոյգ տեղեկութիւններ չունէր, նոյն իսկ գործադիր յանձնաժողովը, որ Կ. Պօլսիցն է կառավարում ուսումնարանները: Մի մարդ որ կարող էր լիակատար ծանօթութիւն տալ, և իբրև մանկավարժ, նորա նկատողութիւնները կշիռ կունենար, բայց այդ մարդը. պ. Ս. Մանդինեանը, ճանապարհորդեց, տեսաւ և լսեց ինչպէս մի մարդ, որ ոչինչ չէր տեսել:

*) Անցեալ տարեան ինքն ըստ ինքեան մի համեմատութիւն կատարվեց կանոնաւոր ուսումն ստացող մի երիտասարդի և վարժապետանոցի ուսուցիչների մէջ: Գևաշայի պ. Կարապետ Փիլիպպոսեան, Բէյրութի գիմնազիստը, առանց ոչ ոքից հրաւիրվելու, Վանայ վարժապետանոցին իր ծառայութիւնը առաջարկեց. չը նայելով որ նրան վարձատրեցին ամսի ու կէս ամսականաւ, բայց պ. Փիլիպպոսեանը մի պատկառելի ժողովրդականութիւն ստացաւ. պէտք է խոստովանել, որ նա դեռ ոչ մի ճառ չէ խօսել...... Այդ համեմատութիւնից այն զանազանութիւնը դուրս եկաւ, որ պ. Փիլիպպոսեանը գիտէ և գործում է.